Մեռած բոպէին եթէ ննջեցեալի բերանը և աչքերը բաց են, գոցում են, ձեռները կրծքին խաչում և բերանին մաքուր կտաւի մէջ փաթաթած նշխար դնում, իսկ եթէ հասակաւոր է, ձեռքին համբիչ են տալիս։ Այնուհետև հրաւիրում են քահանային, որ «Հոգւոց» ասի։ Քահանան հոգոցն ասելուց յետոյ պատանը—«սհան» տալիս է մի կնոջ կամ հարսի կարելու, իսկ երկու հոգի կրակով ջուր են տաքացնում, որը քահանան օրհնում է և ապա ննջեցեալին դնում են մի տախտակի վրայ՝ երեսը դէպի արևելք դարձրած և լողացնում են օրհնած ջրով։ Լողացնողը կամ կին է լինում կամ տղամարդ՝ նայած թէ հանգուցեալը ո՞ր սեռին է պատկանում։ Դրանից յետոյ սանդրում են ննջեցեալի գլխի, բեխի և մօրուսի մազերը. կտրում ձեռների և ոտների եղունգները և մի զոյգ գուլպայ հագցնում ոտներին, ապա պատանքում և դագաղի մէջ դնելով տանում են եկեղեցի, ուր ննջեցեալին առնւազն մի գիշեր պահում են։ Առաւօտեան պատարագ են անում. այդ ժամանակ վառում են մօտ 20—30 մոմ։ Ծամից յետոյ չորս հոգի դագաղը ձեռներին բռնած կամ ուսերին դրած, իսկ եթէ փոքր է, միայն մի մարդ առած ձեռքերի վրայ, տանում են դէպի գերեզմանատուն։ Ցուղարկաւորները շուտ-շուտ փոխարինում են այդ չորս մարդկանց, որպէսզի թէ ննջեցեալին պարտքերնին կատարած լինեն և թէ տանողները չյոգնեն։ Կանայք գերեզմանատուն չեն գնում, այլ կէս ճանապարհի վրայ կանգնում և վերջին անգամ լաց լինելուց յետոյ ձեռները ջրով լւանում և վերադառնում են ննջեցեալի տունն ու սպասում տղամարդկանց վերադարձին։ Իսկ յուղարկաւորող տղամարդիկ մեռելին վերցնելով տանում են դէպի գերեզմանատուն։ Կէս ճանապարհին վայր դնում, կարգ կատարում և ապա կրկին վերցնում և տանում, դնում են գերեզմանի աջ կողմը։

Ցուղարկաւորութեան միջոցին ամենից առաջ գնում է ժամկոչը բուրվառը ձեռին, սրան հետևում են քահանան՝ շուրջառը վրան, և մի կամ երկու տերացու, և յետոյ աբ-